



յում ունեցած փողերը կամ նրա մի մասը յետ ստանալու

Փող խնայելու և խնայածը յետ ստանալու համար հի մի կօպէկ ծախք չէ պահանջվում փող խնայողից, այլ այդ բոլոր ծախսերը ընկնում են կասսայի վրա:

Խնայողական կասսայի նպատակն է, ինչպէս անուան էլ ցոյց է տալիս, միջոց տալ ամեն կարգի մարդկանց 25 կօպէկից սկսած մինչև 50 ռուբլին ամեն անգամ ներս բերելով իր ասպաղայի, սև օրվայ համար փող խնայել:

Այժմ տեսնենք թէ այս խնայողական կասսաները որքան օգտակար են անհատի և հասարակութեան համար:

Ոչ ոք մեզանից չի ուրանայ, որ որքան շատ փող ունենայ մարդ իր ձեռքում, այնքան աւելի փող կը ծախսի: Ահա խնայողական կասսան մեղ միջոց է տալիս ամենահամեմատ գումարից սկսած տնտեսել, խնայել և մեղ մօտ աւելորդ փող չը պահել: Ի միջի այլոց պէտք է ասել, որ Ռուսաստանում մշակվել և մի քանի տեղ գործադրվում են փոստային խնայողական կասսաները, որոնք ընդունում են 5 կօպէկից սկսած: Թէ մէկ և թէ միւս տեսակ խնայողական կասսաները շատ վաղուց գոյութիւն ունեն Վնդլիայում, Ֆրանսիայում և Գերմանիայում, ուր փողովորդ խնայած փողերը միլիարդներն են հասնում:

Մենք հաւատացած ենք, որ ամենաաղքատ մարդն էլ տարեկան 20 ռուբլի աւելորդ, դուր տեղը մտնում է. եթէ ամեն տարի այդքան գումար յետ ձգել իր ունեցածից և այդ գումարը թողնել անձեռնմխելի իր նորածին զաւակի համար, մինչև նրա չափահաս լինելը հայրը խնայած կը լինի մի պատկառելի գումար:

Գիցուք երկրագործի բերքը այս տարի շատ է, հունձը առատ, որի վաճառումից ստացած փողը անհրաժեշտ ծախսերի փողից աւելի է 40—50 ռուբլիով. այս փողը նա ձգում է խնայողական կասսան, գրտենալով որ եթէ ձեռքին մընայ, ձեռք ու փուշ: Կը լինի Գալ տարի էլ յաջորդում է մի քանի րուբլի յետ ձգել և նա կասսայում անհուն մի քանի տասնեակ րուբլի: Իսկ եթէ մի քանի տարի շարունակ կարողանայ մի քանի տասնեակ տնտեսել, այն ժամանակ նա տնտեսած կը լինի ոչ թէ տասնեակներ, այլ հարիւրներ: Եւ նա մասամբ սպասուկած կը լինի, որովհետեւ եթէ մի դժբաղդութիւն պատահի նրան՝ արտը կարկտահար լինի, բամբակը «չուր» տայ, նա ստիպւած չի լինի արհեստ զածող վաշխառուններից 40—50% փող վերցնել և աշուհետեւ նրա գերին լինել, այլ նա իր տնտեսած սեփական փողը կը մտնի:

Այսպէս ուրեմն, ամեն մարդ կարող է մասամբ իրան ապահովել, և եթէ կամենայ՝ ապահովել իր զաւակներին: Այս էլ պէտք է աւելացնել, որ կասսայում եղած փողը ոչ մի պարտքի տեղ

վերցնել չէ կարելի, այլ նա անձեռնմխելի մի զբաղակալութիւն է տիրող համար: Եթէ անհատը այսչափ կարող է օգտվել կասսայից, մի ամբողջ հասարակութիւնը ևս առաւել: Սրա համար հարկաւոր է ամեն տարի հարկ ժողովելու ժամանակ աւելացած փողը, որը իբր թէ զիւրի վրա պիտի ծախսվէր, մի մասը ներս տանել կասսան և ոչ իրանց գրողանները, մի քանի տարի մնայ անձեռնմխելի և եթէ բարեխիղճ լինեն հարկահանները՝ մի քանի կօպէկ իւրաքանչիւր տնից աւելի ստանան, որը գիւղացին ամենաուրախութեամբ կը տայ, և ձգվի կասսան, մի քանի տարուց յետոյ եղած կը լինի մի պատկառելի գումար:

Գուցէ շատերը կը նկատեն, թէ միթէ կօպէկներով էլ բան կը լինի, բայց թող հաւատան որ «մեծ մեծ գետերն ու լճերը գոյացել են անձրեկի կաթիլներից»:

Երբ հասարակութեան փողը որոշ գումարի հասաւ, նրան կարելի է գործ դնել ամենամանրաթելու պէտքերի համար: Մինչև անգամ կարելի է տալ զանազան անհրաժեշտ պէտքերի համար շահում ի հարկէ, շատ է ժամանակ 10—12% վերցնելով. հասարակութեան անհամը ամենայն ուրախութեամբ կը վերցնի այդքան օգուտով նախ որ յարմար առկա է և երկրորդ, որ այդ օգուտով մէջ կայ և իր փողը, ուրեմն ինքն էլ է օգտվում: Իսկ զբաղակալի բերած օգուտով հասարակութիւնը կարող է օժանդակել իր դպրոցին, հասարակական հիմնարկութիւններ և ընթերցարան բանալ, չքաւոր ընտանիքներին օգնել և այլն... Վերև ասածները ամբողջով՝ գալիս ենք այն եզրակացութեան, որ թէ անհատը և թէ ամբողջ ժողովուրդը իրանց օգուտ, վաշխառունների ձեռքից ազատելու համար թող որ առաջ օգտվեն խնայողական կասսաներից: Մի մեծ բազմ պիտի համարել այն զաւակների համար, ուր բացված են այդ տեսակ խնայողական կասսաներ:

ՆԱՄԱԿ ԿԱՂԱՅՈՒՄՆԵՐ

Յուլիսի 27-ին

Այս օրերս առիթ եղաւ կարգից կաղապար գալու: Կարգից կաղապար տանող ճանապարհին այս եղանակով բաւական տօթ է ճանապարհը մինչև Վերին-Քոնստանտնուպոլիս: Ոչինչ առանձին բան չէ ներկայացնում, բայց այդպիսի սկսած արդէն սկսվում է դառնվալը ճանապարհը դէպի Արաբի հովիտը: Օդը՝ բարեխառնութիւնը, բուսականութիւնը՝ նկատելի կերպով փոխվում է և հետզհետէ օդը աւելի ծանր, աւելի խիղճով է դառնում: Հեռուում լոյսի ընդարձակ ցնցուղներ են երևում.— դա կաղապարն է: Վերջապէս, մենք Արաբի հովիտում ենք. ճանապարհի այս և այն կողմում ձմերուկի, սեխի, վարունքի և այլ

բանջարեղէնների տափաստաններն են: Ամառը Արաբի վրայից անցնում են հունի միջոցով: Որովհետեւ կամօրջի վրայով անցնելու համար հարկաւոր է, առնուազն, ինն-տասը վերստ աւելորդ շրջան անել: Հաճախ լաւ դիտենալով կարելի է առանց երկվորի անցնել, բայց փոքր ինչ հունից խոտորվելով՝ կարելի է կորչել գետի խորխորատներում: Վերջին իջնանում մեղ տուին մի պատանի սպալապան, որից կարելի էր երկնչել, որ մի գուցէ այդ տղան փորձանքի բերէր մեզ: Անուտին գիւնը էր: Երկնայկամարի վրա պսպղացող աստղերի լուսով տեսնում էինք ճանապարհը: Ահա և Արաբը՝ բաժանված երկու մասերի:—Գետի որոտածայն խորովը, նրա՝ գիւնային միութեան մէջ՝ անառն երկու տեսքը գործում են մի առանձին տպաւորութիւն: Մայր-Արաբի տեսքը արթնացնում է երեսակայութեան մէջ անցեալ դարերի հուսաւոր պատկերը, երբ «կար ժամանակ որ նա էլ չըբազարէր հարսի պէս, հազար ու բիւր պշրանքով փախչում էր ամբիւրէն», բայց այժմ հայ ուղեորի տրամադրութեան համեմատ, կարծես ճիշդ որ ամառ է և փառահեղ գետը, նրա ալիքները կարծես ողբում են իրանց մշտական երգը անցեալ փառաւորութեան մասին... Վերջապէս, դուրս գալով գետի հանդիպակաց ափը, սկսեցինք բարձրանալ դէպի այն հարթ բարձրաւանդակը, որի վրա գտնվում է կաղապարը: Ահա և կաղապարի այգիները: Կաղապարի օդը բոլորովին վառ չէ, ինչպէս պատմում էին, միայն սոժակներն են այլ միջատների բազմութիւնը՝ անհանգիստ են անում մարդուն: Տեղի այգիներում բուսում են տանձ, խնձոր, դեղձ, թուփ, ծիրան և այլն: Երբեք լինում է քիչ և այն ևս թթու: Զուրը շատ առատ է այստեղ. գետակից առած ջուրը մաս առ մաս անցնում է այգիների, փողոցների միջով և զովացուցիչ աղբյուրութիւն է գործում:

Կաղապարի բնիկ ժողովուրդը պարագայում է այգեգործութեամբ և մասամբ երկրագործութիւնով: Կաղապարցիներ իր այգիների բերքը վաճառահանում է մեծ մասամբ դէպի Կարս: Տները, այգիների պատերը, գետի մոտակայքէն չինված են հողից և չայրված աղիւսից: Ամառը կաղապարի բնիկ ժողովուրդը բնակվում է այգիներում և միայն անշանք դալիս են տուն: Բայց քաղաքին կենդանութիւն տուողները երկրորդ են, որ զանազան կողմերից գալով զբաղվում են առևտրով: Գլխաւորապէս այդ երկրորդի վրա է ծանրացել տեղական ուսումնարանի պահպանութիւնը, որը, սակայն ոչինչ հաստատ եկամուտ չունի, այլ 1,100-ր տարեկան ծախքը ներկայացումնիւրով և թոշակադրամով է լրացվում: Այս տարի գլխաւոր թէ ուսումնարանը կարողանայ բացվել, որովհետեւ մինչև այժմ հոգաբարձուներ չը կան ընտրված և ուսումնարանի մասին ընդհանուր յուսահատական ոգին է տիրապետում:

Լաւ, բայց, դարձաւ նա Արաբէլին.—պիտի մտածես թէ եղբայրդ որպէս տէր է... հոգ չէ, գութանը տուր նորան, իսկ երբ դու էլ գութանի պէտք կունենաս, իմ հողերս և քո հողերդ միասին իմ գութանով կը հերկես...

—Բէզը ողջ լինի, կմկմաց Արաբէլը... —Հի, խո՛տո դէմքով գուցէ բէզը—չը լինի մտադրվում ես հակառակել ինձ...

—Աստուած ո՛չ անէ, բէզը ողջ լինի, մէջ մտաւ կարապետը, եղբայր ջանիլ է...

—Ձահլը դու ևս, ընդմիջեց Արաբէլը.—բէզը ողջ լինի, ես գութանի պէտք ունիմ...

—Ձը լսեցի որ ասացի թէ ևս կը տամ քեզ գութանը... գուցէ դայրացած բէզը:

—Բայց... նորից կմկմաց Արաբէլը:

—Պէ՛հ, ելէք գնացէք ձեր գործին, ասաց բէզը օտքի ելնելով.—իմ վճիռս այդ է:

Եւ շարժվեցաւ դուրս գնալու:

—Բէզը ողջ լինի, մէջ մտաւ նորէն Արաբէլը

—գութանը չեմ տալ, ես...

Բէզը կանգ առաւ, բարկութիւնից գունաթափվեց, մի ուժգին սպառակ խիղց Արաբէլի երեսին և ասեց.

—Շուն գետաւոր, իւրնդըտ, անհաւատ, կորստւոր դուրս, չը համարձակես այսուհետև հրամանիս դէմ դնել.—օյան, Հիւսէյն, դարձաւ նա իր ծառային—դուրս գցի սրանց...

Եւ մինչդեռ ծառան երկու եղբայրներին հրելով, նախատելով և վրակոթներին մի քանի հետ խիղիւղ դուս էր գցում, բէզը մտաւ միւս սենեակը:

Երկու եղբայրները բազը իջան և ձիւրը ախո-

ջեռնարկել են և մի մեծաղբը, քարաշէն եկեղեցու շինութեանը, որը մի տարի շինվում, միւս տարի դադարում է գրամի սղութեան պատճառով: Եթէ այսպէս շարունակվի, հաղիւ թէ քսան տարուց յետոյ կաղապարցիները կարողանան օգտվել այդ եկեղեցուց, այն ինչ պարզ և համեմատ, բայց ընդարձակ մի շինութիւն շինելով աղօթարանի համար, աւելի շուտ կազմավէր փողոցը մուսուլմանութիւնից: Քաղաքը նոր նոր սկսում է կանոնաւորվել, շինվում են կանոնաւոր տներ ու խանութներ, իսկ ինչ մասը շատ կեղծները, նոյն նեղ շաւղիները, ինչպէս և այլ տաճակային թաղաքներում: Քաղաքում բնակվում է 154-րդ Գերբեշեան հետնակ գունդը, առանց որի կաղապարը շատ յետ մնացած կը լինէր: Քաղաքիս հարաւ արևմտեան կողմում, Արաբի ափին գտնվում է այստեղի աղահանքը: Տեղիս աղը իր յատկութիւնով ստոր է կողբի աղից, բայց նորերս բացված մի հորում յայտնվել է ամենամաքուր սպիտակ աղ: Դժբանքով հանաւորութիւն, որը մարմարի պէս փայլուն է և որից շինում են այժմ, թէև քիչ քանակութեամբ, տէրողորմաներ, զրքեր, նոյն իսկ փոքր դիրքով եկեղեցիներ, մզկիթներ և այլն: Անշուշտ կովկասի ցուցահանդեսում հանդէս դրված կը լինեն այդ աղից շինած առարկաները:

ՆՆՈՒՅԻՆ ԼՈՒՐԻՆ

Մեղ խնդրում են տղազրկ հետեւալ նկատողութիւնը. «Էջմիածնի հողերը վարչութիւնը յանձն է առել հայոց դպրոցների մէջ ուսուցչութիւն անողներին իրաւունք տալ կամ չը տալը: Դրանով այդ հողերը վարչութիւնը իր ձեռքումն է կենտրոնացնում բոլոր հայոց զրգրոցների վարժապետների և վարժուհիների զեկավարութեան իրաւունքը: Այդպիսի յարաբերութեան մէջ դնելով հայոց ուսուցչներին, նոյն հողեր իշխանութիւնը հետեւողաբար վարված կը լինէր, եթէ կաղեք վարժապետների կանոնաւոր շատաւ, ինչպէս կառավարչական զորոցներումն է լինում, և որոշէր ամեն մի առարկայի դասերի թիւը, և վարժապետների ռոճիկները քանակութիւնը: Այն ժամանակ գտնէ վարժապետները կիմանային թէ ումից են կախված, և ինչ է իրանց դրութիւնը:

Յուլիսի 25-ին Ստամբուլի նահանգական դատարանում քննվեց վրաց աղանականութեան նախկին պարագլուխ և Թիֆլիսի նախկին քաղաքապետ Վրիտի Կիպիանի պապականութեան յայտնի գործը: Սպանութեան մէջ մեղադրվող Գրիգորի Ստրպետով, որը յանցաւոր է ճանաչված կողմագնացելու նպատակով ուրիշի հետ միասին

նից դուրս քաղցին, այդտեղ էլ կաւազն և բրին միջանի դուրսը ստիպվեցան բաժանել և գլուխին կախած սկոսեցին գիւղը վերադառնալ...

Երբ ձորը գլխից դէպի գիւղէն էին իջնում և հասել էին առուակի մօտ գտնվող փոքրիկ պարտիզի տեղը, նրանց առաջ դուրս եկաւ Գովհանէ, թէհան, դէմ կարից և խնդրեց որ ցած իջնեն ձորից:

Եղբայրները իջան, գիւղացիք ամեն կողմից շրջապատեցին նրանց:

—Հի, գուցէ Գովհանէս քէհան—հիմա պատմեցէք մեզ թէ գործը ինչպէս վերջացաւ, թէ Աստուած կը սիրէք, ճիշդն ասեցէք:

—Քո ասածի պէս վճուց, ասեց կարապետը:

—Տեսնեք, իսկ ապտակը...

—Քոնիցը ուժովն էր... մէկ հէտ էլ ես կերպ ծառայեց...

—Հայոյանքը...

—Մի քանի հատ աւելի:

Գովհանէս քէհան հեղանական մի դառնութիւն արտայայտող դէմքով նախ գիւղացիներին և ապա երկու եղբայրներին դառնալով ասաց.

—Հայը յիմար է և անխել, երբ մի բան է վճուում, հայի ճիշդը սուտ է, իսկ օտարի սուտը ճիշդ... այս է դրութիւնը... իմ սպասակը և հայոյանքը հայի էր, իսկ տաճկի ապտակը և հայոյանքը տեսնեք թէ ինչպէս ներգործեց...

Վ. Փափաղեան



դին է, անխղճութիւն է և վերջապէս ամօթ է...  
— Ի՞նչ ամօթի բան կայ, շատայնց պատասխանել հասակաւորը, բայց նոր կանոնադրութեան հոգաբարձուն միմիայն զարդոյ տնտեսական շահերը պիտի պաշտպանէ և պաշտպանում է, ուրիշ էլ ի՞նչ կա ուղիւս:

— Ի՞նչ կայ: Մտածիր: Հոգաբարձութիւնը հրաւիրում է ուսուցիչ, ներքինի, մանկավարժ, այդ, այդ ներքին տնտեսները հրաւիրում են մանկավարժ, ոչ թէ հասարակ, այլ զեռ. հըմուտ մանկավարժ և այլ էլ քանի, 500 րուբլի առճկով: Այժմ, ասած, հ. հմուտ լավէլը կը համաձայնէ այդ առճկով: Եւ որ այդ լավէլը մանկավարժը կարող էր ընդունել միայն, և այժմ պարզ է թէ այդպէս ինչ վնաս պիտի կրէ զարդոյ ուսումնական մասը:

— Այդպէս, դու կը զանկանայիր որ հմուտ մանկավարժը 1,000—1,200 րուբլի առճիկ նշանակէր, որ լաւ լինէր:  
— Բայց թողնենք իմ ցանկութիւնը: Ընդունիր, որ այդ հմուտ մանկավարժը կարող է ունենալ ոչնչով, կարող ծնողները, քոյր և եղբայր, կամ կին և որդիներ: Եւ ինչպէս կարողանայ կին պահել, բնիկ հրաւիրել և իր գոնէ մի որդու զատարարութեան պէտքը հոգալ: Գու աւտում էս, որ 1200-ը քո պէտքերին բաւականութիւն չէ տալիս, իսկ մի 500 ր. առճկով ինչպէս պիտի կառավարվի այդ խեղճ հմուտ մանկավարժ, մարդը:

— Ուշիկ, կարող են նախ՝ այն պատճառով, որ նրանք ուսուցիչներ են, շատ էլ որ ներշնչան, էլի պիտի համաձայնեն 500-ին: Երկրորդ՝ քանի որ յանձն են առել ուսուցչութեան պաշտօնը՝ դատարարութիւն յանձնողը է նրանց կողմից ծնող, քոյր և եղբայր յիշուած: Երրորդ՝ նրանք երբեք իրաւունք էլ չունին ամուսնանալու, նա մասնաւոր զեռ դատարի հայր էլ դառնալու:

— Ոչ, եղբայր, քո այդ զեռեցիկ զատողութեան և նրանի զարդոյ հոգաբարձութեան այդ խելացի տնտեսութեան մասին, ես ինչպէս տեսնում եմ, հարկաւոր կը լինի Պոլսի թերթերից մէկում մի Բոսֆորական աղբու ներքոյ գրել, այնպէս որ հրկան անգամ կարմիր, լսելով հայի այդ անտեսական յառաջադիմութիւնը:

մայնց երկու զրահակիր նաև ուղարկել չլրտեկողին: Երբիք միայն սկսեց խորհուրդ կազմել կրիտայիները պահանջների վերաբերմամբ:

ՊԱՐԻՉ, 3 օգոստոսի: Բարձրագոյն դատարանը առաւօտուայ նիստում Գլխին 179 ձայններով մեծամասնութեամբ և Բոչֆորին 183 ձայններով մեծամասնութեամբ 18-ի դէմ Բուլանովի համախորհրդի ճանաչեց, որից յետոյ մի վճիռ կայացրեց, որից երկուստէ թէ ճշմարտում առաջ բերող մաստերը յանցաւոր զիտումները զուրկ էին: Այդ բարձրագոյն դատարանը սկսեց քննել պետական դանձարանի փողը վատնելու գործը: Գեներալ Կամպիւնոն ասացուցեց, որ դանձարանի փողը վատնումն կատարված իրողութիւն է: Բոժէ և Մէրմէն այն միտքն էին պաշտպանում թէ վատնման գործի քննութիւնը ներկայ է ոչ թէ բարձրագոյն դատարանին, այլ զինուորական դատարանին: Բարձրագոյն դատարանը Բուլանովին մեղաւոր ճանաչելով պետական դրամների վատնման և իւրացման համար, մերժեց թեթեւացնող հանգամանքները և դատաւարեց Բուլանովին, Գլխին և Բոչֆորին արտոյր:

ՊԵՏԵՐՈՒՊՈԼԻՍ, 3 օգոստոսի: Այսօր Ֆինանսների մինիստրը հաստատեց Աստիկան առևտրական բանկի կանոնադրութիւնը:

ՊԱՐԻՉ, 3 օգոստոսի: Ուսուցչի զինուորական մինիստրը զենքերով վանձովակի հասաւ Պարիզ: Նրան այցելեց Ֆրէյսինէ: Բուլանովին համար զուրս բերած դատավճիռը զգալի տպաւորութիւն չը թողեց Պարիզում: Երկուստէ խաղաղ անցաւ, այնպէս որ մի մտղով կամ ցոյց չկաւ: Բուլանովին մասնաւորով անդամներին մի մասը այսօր ուղևորվեց Լանդոն, որպէս զի Բուլանովին հետ միասին պըրսիլամացիա կաղմնէ:

ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ԲՈՒԼԱՐԻՍ, Ֆիլիպպոս Գ. Տ. Գրեցէր, ուրախութեամբ կը շնորհակալուի: Ձեր զրամ հասցեով (Մշակ) ուղարկելու յուլիսի 1-ից:

ԹԵԼԻԱՒ, Ե. Աղբիւնեան. Յունիսի 20-ից հաղորդած լուրի առթիւով, որ ապագրված է «Մշակի» 71 համարում, բաւարարութիւն են խնդրում, անձիշդ համարելով հաղորդածը: Յանձն կը առնում արդեօք պատասխանատու լինել: Այնպէս պէս պատասխանեցէք և պարզեցէք այդ բոլորը:

Ճամանակաւոր Խմբագիր Յ. ՏԼԻՄԱՐԿԱՍԵԱՆՅ

Հրատարակել ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐԻՆԻ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՅ

1897-98, 3 օգոստոսի: Յունաստանին կատկածով վերաբերվելու պատճառով, Բ. Գուռը հրատարակելու:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ւ Ն Ն Ե Ր

Կիրակի, օգոստոսի 6-ին

Պ. ՏԵՐ-ԴԱԽԹԵԱՆ

ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԽՄԲԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՏԱՅ

«ԵՐՐՈՊԱՅ» ԱՅԳԻՒՈՒՄ

I. ԵԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՃԵՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Կամեղիա 1 գործող. հեղ. Ա. Միանարանցի

II. ՍԼԵԻ ԴԱՐԲԻՆ և III. ՕՍԿԱՆ ՊԵՏՐՈՎԻՉԸ ԴՈՒՌՔՈՒՄԸ

ՎՈՂԵՐՆԵՐԸ

Բացի զինուորական երաժշտութիւնից, կը լինի և սազանգար Աբգոն Բաղին և Շամիրի խումբը, իսկ անտրակտում կերպէ Արաւաշէն Յակոբեան: 1—1

ԵՐԶՐՈՒՄԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

Երաժշտարարում է, որ այլ և այլ անտիկալ արգելքները յեղաշրջեցին հոգաբարձութեան ծրարիրը և հարկադրեցին գէթ այս տարի թողնել զարդոյները նախկին դրութեան մէջ. ուստի Երզրումում վարժապետութիւն և վարժուհիութիւն անել ցանկացողները թող ներուրթիւն չը կրեն այլ ևս զիմեղու հոգաբարձութեանը: 2—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՐՀԵՍՏԱԻՈՐԱՅ

Զարդոյի վարժութիւնը սրանով յայտնում է, որ ուսումնարան նոր մանող աշակերտների քննութիւնները և վերաքննութիւնները կը լինեն օգոստոս ամսի 23, 24 և 26-ին: Խնդիրները ընդունվում են ուսումնարանի գրասենեակում ամեն օր 10-ից մինչև 12 ժամը, բացի կիրակի և ամեն օրերից: Ուսումնարանի զիրիկտորի անունով տրւած խնդիրքի հետ պէտք է ներկայացնել և մէտրիքական վկայականը (և ոչ թէ պատճիւր) և ծաղկի վկայական: Արհեստագործ զարդոյ մանողները պէտք է առողջապաշտ լինեն և պէտք է լինեն 13½ տարեկանից ոչ պակաս և 19 տարեկանից ոչ աւելի:

Ուսումնարան մտնողները պէտք է զիւնենան որբական ծննդութիւնից զրուաւոր արդիւնքները և անցքերը, ապա ընթերցանութիւն և պէտք է մայրենի ու ռուսաց լեզուով առանց խոշոր սխալների զրեն և թուաբանական չորս զործողութիւնները զիւնենան: 2—3

ՄԻ ՕՐԻՈՐԴ, որ աւարտել է քաղաքային պրօֆեսիոնալ զարդոյ, ցանկանում է հայոց ծխական զարդոյներում ՁԵՌԱԳՐՈՒԹԻ զանաւոր տար: Հասցէն կարելի է իմանալ «Մշակի» խմբագրատանը: 1—5

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ն Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Յ Հ Ա Մ Ա Ր

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել զործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ:

Աւանդելի տուարկայք սորա են՝ 1) Առևտրական հետեսութիւն, 2) Առևտրական թուարանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համբիշի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) զեղագրութիւն:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից, ընդունելութիւնները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, երեկոյան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօրալուսի Աղէքսանդր ֆրիդմանովի տանը, № 9 Սերգիէվսկայա և Նազարեայա փողոցների անկիւնում, զեղատան զիմաց: Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ՁԻՄԱՊԵՍ Էղբ. Ծովանցիների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքայիք զիմում են կուրսերի հիմնողին—ՅՄ Խիփաշ, Ս. Ս. Մաքսիմով:

8—20 (Ե. Շ.)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻԱՆԴԱՆՈՅ

Բ. ՆԱՍԱՍԱՐԿԵԱՆԻ

(Կուրիա, Վօրոնցովի արձանի հանդիպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ

ԲՈՒԴԱՎՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.  
ԿԻՐԻՔԻՆԻ ԻՍԼԱՄԱՆԿԱՆ—11½—12 ժ. կանանց և երեխայոց ց.  
ԲԵՆԿԻՆԻՎՍԿԻ—11—12 ժ. անկախ, կոկորդի, քիթի ց. և սիֆիլիսի (վիրաբուժ. և ատամնաբուժ.)  
ԱՐՏԵՄԻՆԻ—12—1 ժ. երեքարթի, ուրբախ և կուրակի, կանանց ց.  
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կուրակի:

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ԳՈՐԾՄԱՍԿԻ—5½—7 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.  
ՓՈՒԴԻՆԵԱՆ—5½—6½ ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրոտերապիա):  
ԲԵՆԿԻՆԻՎՍԿԻ—7—8 ժամ.  
Հիւանդանոցում են մանկաբարձուհիք՝ Երեանցեան և Արտաղեան:  
Վճար—50 կո: Համախորհրդի (Կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ:

Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ԲՈՒԴԱՎՈՎՍԿԻ

Վ. ՇԵՔՍՊԻՐ

«ԶՈՒՐ ՏԵՂԸ ՄԵԾ ԱՂՄՈՒԿ»

Կամեղիա 5 արարուածով

Թարգ. Յ. Լալայեանցի

Գինն է 50 կոպէկ:

Վաճառվում է Կենտրոնական զրաւաճառանոցում և իշխ. Բէհրութեանի զործակարական պալլիսիոնում: 4—10

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՊԱՆՄԻՕՆ

ՏԻԿԻՆ ԿՈՒԷՍՏԻ

(Վերամիմոսկայա փողոց, № 34)

Կը բացվի օգոստոսի վերջին: Պատրաստում են բոլոր միջնակարգ զարդոյների բարձր դասաւորների համար: Ֆրանսերէն և գերմաներէն դասեր և զործնական վարժութիւն: 2—10

ԳԻՄՆԱԶԻՍՏԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՏԱՆ

ՄԻ ԱՇԱԿԵՐՏՈՒՄԸ

Դանկանում է աշակերտութիւններ պատրաստել: Հասցէն. Նորայէնի փողոց, տուն Պարուրեղովի, № 8. 2—10

ԱՁԴ.

Աղգային երկսեռ վարժարանաց անօրէնութեան և ուսուցչութեան պաշտօնը զոհարարեցին թողալու կարող ազգանոց մը յանձնելու փախաբաւ, ուսումնական խորհուրդս կը խնդրէ որ այն պաշտօնին յարմար և զայն ստանձնել փախաբող ազգային հաճին յատուկ նամակաւ դիմել իրեն և յայտնել իրենց պայմանները: Խնդրուած պաշտօնային պարտ է լինել վարժ պատրաստի հմուտ հայերէնի և մի եւրօպական լեզուի, ինչպէս նաև ինչ-ինչ կարեւոր ուսմանց և զիտութեանց:

Դպրոցական նոր շրջանը սեպտեմբերի 1/13-էն կը սկսի, հետեւաբար ամեն առաջարկէ պարտին լինել ընդ փոյթ:

Նամակը պիտի ուղղուին առ ուսումնական խորհուրդ, առաջնորդարան հայոցի Զմիւռնիա:

Ուսումնական խորհուրդ:

4—5

ԲԺԻՇԿ ՊՐԷՕԲՐԱԺԷՆԱԿԻ

Մասնաւորապէս բժշկում է էլկտրականութեամբ, ֆարադական և գալվանական հոսանքով ձեռքերի և ոտների անդամաւորութիւնից, բէլմատիսմից, ներվային հիւանդութիւններից և կոնտրակտուրայից (մկանունների անդամաւորութիւն), բժշկում է կոյրերին և խուլերին անդամաւորութիւնից և նոյնպէս ընդունում է կանացի հիւանդութիւններով և սիֆիլիսով տկաւներին: Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտուն 9 ժամից մինչև 12 ժամ և երեկոյան 7 ժամից մինչև 8 ժամ: Միջայէնեան փողոցում, Բէլիանովի տանը, № 103. 3—10